


Ս. ՍԱՐԳՒՍ ԵԿԵՂԵՑԻ ԳԱՀԻՐԷԻ



Ասկէց վերջը, իբր մէկ ու կէս դար, որ եւ է յիշատակութեան չենք հանդիպիր պատմութեան մէջ, ո՛չ Եգիպտոսի Հայութեան և ո՛չ Եգիպտոսայ եկեղեցիներու մասին:

Մէմլուքներու վերջին սաստկագոյն բարբարոսութեանց միջոցին, երբ Քրիստոնէից դէմ հալածանքը ամենախիստ աստիճանի հասաւ և երկրացի Քրիստոնեաներն անգամ կորսնցուցին իրենց ազգային ինքնութիւնը, տարակոյս չկայ թէ Հայերն ալ ենթարկուեցան նման վիճակի մը, թէեւ առանց թուապէս իսպառ ջնջուելու:

ԺՁ. դարուն սկիզբը, Սուլթան Սէլիմի նուաճումով (1517) իրագործուած թրքական տիրապետութեան տակն, հաւանաբար Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարանին և Հայ Աւագանիին գերիշխան պետութեան մօտ ունեցած ազդեցութիւններէն քաջալերուած, հայ կեանքը դարձեալ կ'սկսի շունչ առնել Նեղոսի ափերուն վրայ, թէեւ տակաւին միշտ ստուերածուած և օտարախառն դրութեան մը մէջ. որովհետև, թէեւ փոխուած էր դրօշը, բայց երկրին վարչական կազմը կ'մնար նոյնը, քանի որ 24 Մէմլուք պէյերն էին որ կ'կառավարէին դարձեալ Եգիպտոսը, տարեկան սուրբի վճարումով մը միայն յայտնելով իրենց ստորագասութիւնը փոխարքայ թուրք փաշային, ու կ'շարունակէին իրենց անկարգ վարչութիւնը և անողոք խստութիւնները, մասնաւորապէս ընդդէմ Քրիստոնէից և եկամուտ տարբերուն:

Այդ միջոցին, այսինքն Մէմլուքներու տիրապետութեան չըջանի երկրորդ կիսուն էր հաւանականաբար, որ Հայերը իրենց ստացական կամ սեփական եկեղեցիներէն ու վանքերէն բոլորովին զրկուած, կ'հարկադրուին դարձեալ օգտուել Ղըպախներու բարեացակամութիւնէն: